ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արմեն Նոդարի Միրզոյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ներքին անվտանգության և հսկողության բաժնում, որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (13.07.2023 թվականից 12.01.2024 թվականը) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. պետական համապատասխան կառույցների հետ համագործակցելով՝ ապահովել եմ զանգվածային լրատվամիջոցներում Ծառայության աշխատակիցների, ինչպես նաև Ծառայությանը վերաբերող այլ տեղեկությունների վերաբերյալ տեղեկատվության մշտադիտարկում,
2. ձեռնարկել եմ միջոցներ սոցիալական ցանցերում և զանգվածային լրատվամիջոցներում Ծառայության աշխատակիցների վերաբերյալ հնարավոր ապատեղեկատվության տարածումը կանխարգելելու ուղղությամբ,
3. հավաքագրել եմ տեղեկատվություններ, որոնք վերաբերել են Ծառայության աշխատակիցների բարեվարքությանը, կարգապահությանը և ներքին կանոնների պահպանմանը,
4. իրականացրել եմ ստուգումներ Ծառայության համապատասխան արտաքին ստուգող խմբի բարեվարքության և Ծառայությունից բխող այլ կարգապահական կանոնների պահպանման վերաբերյալ,
5. բաց աղբյուրների միջոցով ուսումնասիրել, համադրել և համապատասխան արձանագրություններ եմ կազմել աշխատակիցների հնարավոր շահերի բախման հավանականության մասին, դրանց վերաբերյալ առարկայական առաջարկներ ներկայացրել,
6. կատարել եմ Ծառայությանը վերաբերող ընթացիկ տարաբնույթ հանձնարարականներ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության
ներքին անվտանգության և հսկողության
բաժնի փորձագետ՝ **Ա.ՄԻՐԶՈՅԱՆ**

« 17 » հունվարի 2024թ.